

## ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՍԻԱ

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Հարավային Ասիան ակնառու ֆիզիկաաշխարհագրական հատկանիշներով առանձնացած է մյուս տարածաշրջաններից: Հյուսիսային կողմից այս տարածաշրջանը բարձր լեռներով սահմանազատված է Կենտրոնական և Արևելյան Ասիայից, արևելյան կողմից՝ խիտ անտառներով՝ Հարավարևելյան Ասիայից, արևմտյան կողմից՝ բարձրավանդակներով ու անապատներով՝ Հարավարևմտյան Ասիայից:

Հարավային Ասիա հասարակական-աշխարհագրական տարածաշրջանում ներառված երկրների ընդհանուր տարածքը 4,5 մլն կմ<sup>2</sup> է՝ աշխարհի ցամաքի 3 %-ից փոքր-ինչ ավելի: Այստեղ է բնակվում աշխարհի բնակչության 23 %-ը:

Ո՞րն է տվյալ տարածաշրջանի դերն աշխարհում: Հարավային Ասիան աշխարհի հնագույն քաղաքակրթության օջախներից է: Ինդոս գետի հովտում՝ ներկայիս Պակիստանի տարածքում ձևավորված քաղաքակրթությունն իր ազդեցությունը տարածել է Հնդստան թերակղզու վրա: Ինդոսի հովիտը հին սանսկրիտ լեզվով անվանվել է Սինդհու, որը թեթև փոփոխությունից հետո դարձել է Հինդու, Հինդ: Մոտավորապես 3500 տարի առաջ Սինդհու ներթափանցած արիացիներից փոխառվեց և ավելի զարգացվեց նրանց հավատքը, որն անվանվեց **հնդուականություն**: Փոխառվեց նաև սոցիալական շերտավորման պրակտիկան՝ կաստայական համակարգը, որի համաձայն՝ հասարակությունը բաժանվում է խավերի: Ամենաբարձր խավը՝ կաստան, կազմում էին բրահմանները: Առանձնացվում էին նաև՝ զինվորականների, առևտրականների, արհեստավորների և այլ բազմաթիվ կաստաներ:

Հարավային Ասիայի պատմական դերը կապված է նաև **բուդդայականության** ծագման հետ: Ք. ա. VI դարում Հյուսիսային Հնդկաստանի թագաժառանգ Սիդհարթհա Գաութաման, ով հայտնի դարձավ **Բուդդա** անվամբ, ստեղծեց իր կրոնական ուսմունքը՝ բուդդայականությունը, ներկայումս գոյատևող համաշխարհային կրոններից մեկը:

Հարավային Ասիայի պատմական մյուս դերն էլ տարածաշրջանի ազդեցությունն է աշխարհի բնակչության լեզուների տարածման վրա: Պատմական երկարատև շփումների շնորհիվ **հինդի** լեզվի ազդեցությունը տարածվել է եվրոպական ժամանակակից լեզուների վրա, որոնք բոլորը միասին կազմում են **հնդեվրոպական լեզվաընտանիքը**: Իսկ Հնդստան թերակղզու միջին և հարավային մասերի լեզուները զարգացել են հյուսիսից մեկուսացված և կազմում են **դրավիդյան լեզվաընտանիքը**:


X դարում Հարավային Ասիայում տեղի ունեցավ մեկ այլ խոշոր իրադարձություն. Պարսկաստանից և Աֆղանստանից տարածաշրջան թափանցեց **խլամը**: Իսլամի «հաղթական» տարածումը հնդուական բնակչության շրջանում բացատրվում է հենց հնդուական կրոնի արատներով, մասնավորապես՝

կաստայականությամբ: Կաստայական հասարակության «հատակում» արհամարհված միլիոնավոր հինդուսներ ողջույնով ընդունեցին իսլամը, որը հասարակության մեջ անհավասարություն չէր սերմանում և յուրաքանչյուր անհատի թույլ էր տալիս իրեն զգալ հասարակության իրավահավասար անդամ:

Սակայն իսլամի մուտքը նաև խախտեց տարածաշրջանի հասարակական անդորրը և ստեղծեց անհանգիստ ու բախումային իրադրություն: Բնույթով հանդարտ հնդուականությունն ու ագրեսիվ մահմեդականությունը դժվարությամբ են գոյակցում: Համայնքներում այդ կրոնների միջև կա մրցակցություն, խանդ, թշնամանք: Այդ բոլորն էլ ավելի սրվեցին, երբ Հարավային Ասիայում սկսեցին տիրապետել եվրոպացիները, ովքեր այդ հակամարտությունն ավելի թեժացրին և ծառայեցրեցին իրենց շահերին: Բրիտանացիները, Հարավային Ասիային անկախություն տալով (1947թ.), անորոշ թողեցին մահմեդական և հնդուական խառը բնակչությամբ բնակեցված հյուսիսի լեռնային տարածքների՝ Ջամուի և Քաշմիրի պետական պատկանելության հարցը: Այդ տարածաշրջանը «կռվախնձոր» է Հնդկաստանի, Պակիստանի և Չինաստանի միջև: Բաժանումից հետո Հնդկական հանրապետությունում մնաց մահմեդական «փոքրամասնությունը», որը մինչև մեր օրերը գրեթե եռապատկվելով՝ հասել է 127 միլիոնի (դա հավասար է Ճապոնիայի բնակչության թվին):

**Բնական պայմաններն ու ռեսուրսները:** Հարավային Ասիան բնական հսկայական տարբերությունների, նույնիսկ հակադրությունների տարածաշրջան է, որում առանձնանում է ֆիզիկաաշխարհագրական երեք գոտի. հյուսիսային՝ լեռնային, հարավային՝ թերակղզային, և միջին՝ գետահովտային-դաշտավայրային:

Տարածաշրջանի արևմտյան մասում՝ Թար անապատում և շրջակայքում, տեղումների տարեկան քանակը բավարար չէ հողագործության համար, ուստիև կազմակերպված է ոռոգման մեծ ցանց: Բանգլադեշում և հարակից



Իմալայների սառցադաշտերով պատված հարավասիայաց կատարները

Բենգալիայում, ընդհակառակը՝ տեղումների քանակը չափազանց մեծ է, որի հետևանքով մշտապես լինում են ջրհեղեղներ, որոնք ծածկում են գյուղատնտեսական դաշտերը և գյուղերը, յուրաքանչյուր տարի տանելով հազարավոր մարդու կյանք:

Հարավային Ասիայի ընդերքի հարստություններից առանձնանում են **քարածուխը, երկաթի և մանգանի, քրոմի, տիտանի** հանքաքարերը: Դրանց մի մասը Հնդկաստանում է (այդ հարստությունների մասին նշված է «Հնդկաստան» թեմայում):

Հարավային Ասիայի մեծ մասում կլիման մերձհասարակածային մուս-տոնային է՝ առատ տեղումներով: Բացառություն են լեռների բարձրադիր մասերը, որտեղ ցուրտ է, և որոշ հատվածներ նույնիսկ ծածկված են սառ-ցաղաշտերով, ինչպես նաև Ինդոս գետի հովտի մի մասը, որտեղ տեղումներն այնքան քիչ են, որ առաջացել է Թար անապատը:

**Բնակչությունը:** Հարավային Ասիայի բնակչության մեծ մասը բնակվում է Հնդկաստանում, ուստի ամբողջ տարածաշրջանի բնակչության թվի աճի, կազմի և տեղաբաշխման ընդհանուր բնութագիրը հիմնականում նման է Հնդկաստանի բնակչության բնութագրին: Միաժամանակ առկա են բնակ-չության աճի տարածքային տարբերություններ, որոնք պայմանավորված են բնակչության կրոնական կազմով և պետությունների վարած ժողովրդագրա-կան քաղաքականությամբ:

Գիտնականների կանխատեսման համաձայն՝ Հարավային Ասիայի բնակ-չությունը, որն այսօր մի փոքր է զիջում Արևելյան Ասիային, 2050թ. զգալիորեն կգերազանցի վերջինիս (2220 մլն և 1587 մլն համապատասխանաբար):

Հարավային Ասիայում ներկայումս բնակվում է 1,6 մլրդ մարդ կամ աշխարհի բնակչության 23 %-ը: Տարածաշրջանում կա երեք երկիր, որոնցից յուրաքանչյուրն ունի ավելի քան 100 մլն բնակիչ (Հնդկաստանը՝ 1 մլրդ 241 մլն, Պակիստանը՝ 177 մլն և Բանգլադեշը՝ 150 մլն):

Հարավային Ասիայի բնակչության բնութագրական մյուս գիծը քաղաքային բնակչության բաժնի փոքրությունն է: Տարածաշրջանի քաղաքներում է բնակվում ամբողջ բնակչության 36 %-ը (հիշենք, որ ամբողջությամբ վերցրած, աշխարհի քաղաքներում է բնակվում բնակչության 50 %-ը):

Թեպետ տարածաշրջանում գերակշռում է գյուղական բնակչությունը, բայց այդտեղ են աշխարհի գերխոշոր 26 քաղաքային կուտակումներից 5-ը. Գեյլին և Մումբայը (23-ական մլն), Կարաչին և Կոլկաթան (17-ական մլն) և Դաքան (14 մլն):

Քաղաքների չափազանց խոշորացման գլխավոր պատճառը երկրների հողագրկված և գործազուրկ գյուղացիների մեծ հոսքն է խոշորագույն քաղաքներ՝ աշխատանք գտնելու հույսով:

Հարավային Ասիան ոչ միայն աշխարհի ամբողջ, այլ նաև աղքատ բնակչության կուտակման խոշոր արեալն է: Հարավային Ասիայում բնակվում է երկրագնդի բոլոր բնակիչների ավելի քան 1/5-ը, իսկ չքավոր բնակիչների՝ 2/3-ը: Բարձր է անգրագիտության մակարդակը: Երեխաների կեսը թերսնվում է կամ բնականոնից պակաս քաշ ունի: Բարձր է կանանց մահացությունը և, հետևաբար՝ ցածր է բնակչության մեջ նրանց բաժինը:

Բնակչության տեղաբաշխման գլխավոր գիծը կենտրոնացումն է գետահովիտներում: Բնակչության խտությունը հատկապես բարձր է մշակվող միավոր հողատարածության հաշվով: Այս ցուցանիշով աշխարհի ամենախիտ բնակեցված՝ «ռեկորդակիր» երկրներից են Բութանը, Նեպալը և Բանգլադեշը:

**Տնտեսությունը:** Չնայած զգալի առաջընթացին՝ Հարավային Ասիայի երկրների տնտեսությունը մնում է թույլ զարգացած, ինչը պայմանավորված է դրանց գաղութային անցյալով, բնական ոչ մեծ ռեսուրսներով, ֆինանսական միջոցների սղությամբ: Խոշոր արդյունաբերական ներուժ ունեն միայն Հնդկաստանն ու Պակիստանը: Մյուսները հիմնականում հետամնաց գյուղատնտեսական երկրներ են:

Գյուղատնտեսության կառուցվածքում գերակշռողը **բուսաբուծությունն է:** Հարավային Ասիան աշխարհի առաջատարն է թեյի, ռսպի, ջուտի, գետնանուշի, գարու, բրնձի, ցորենի, բամբակի և այլ բույսերի համախառն բերքով:

Պակիստանի տնտեսական միջուկը **Փենջաբ** նահանգն է (փենջ՝ հինգ)՝ հինգ գետի միջագետքը, որտեղ կենտրոնացված է երկրի բնակչության 60 %-ը, մայրաքաղաք **Իսլամաբադը**, հնագույն քաղաք **Լահորը:** **Մինդը** երկրի հարավում է **Կարաչի** նավահանգստային խոշոր քաղաքով՝ երկրի նախկին մայրաքաղաքով (մինչև 1959թ.), և Պակիստանի բրնձի և ցորենի շտեմարանն ու բամբակագործության և բամբակի տեքստիլի զարգացած շրջանն է:

**Բանգադեշը** տիպական գյուղատնտեսական երկիր է՝ աշխարհի ամենաաղքատ երկրներից մեկը: Քաղաքներում բնակվում է երկրի բնակչության ընդամենը 25 %-ը: Խոշոր քաղաքներն են մայրաքաղաք **Գաքքան** և գլխավոր նավահանգստային քաղաք՝ **Չիտագոնգը:** Բնակչության խտությունը բացառիկ մեծ է (1400 մարդ/կմ²):

**Նեպալը** տնտեսական առումով աղքատ երկիր է: Նեպալի և Չինաստանի սահմանին է գտնվում երկրագնդի բարձրագույն լեռը՝ **Ջոնոլունգման:** Տարբեր երկրներից ժամանող լեռնագնացներն այդ գագաթ են բարձրանում հիմնականում Նեպալի տարածքից, ինչը երկրին զգալի եկամուտ է ապահովում: Երկրի բնակչության 90 %-ը հինդուսներ են, լեզուն՝ նեպալի:



պլանտացիաներ Շրի Լանկայում

**Շրի Լանկան** նախորդների նման հնդուական կամ մահմեդական երկիր չէ: Դա բուդդայական երկիր է (բուդդայականները կազմում են բնակչության 70 %-ը): Երկիրն անկախացել է Հնդկաստանից մեկ տարի հետո (1948թ.) և անվանվել է Ցեյլոն (մինչև 1972թ.):

Ի տարբերություն Հնդկաստանի և Պակիստանի՝ Շրի Լանկան տնկատափային գյուղատնտեսության երկիր է: Գլխավոր մշակաբույսերն են թեյը, շաքարեղեգը, սուրճը, բրինձը, պտուղները:

Շրի Լանկայի քաղաքական իրադրությունն անկայուն է, ինչն էլ խանգարում է երկրի տնտեսական առաջընթացին: Այդ իրադրությունը Շրի Լանկայի պատմական անցյալի արձագանքն է:

**Մալդիվները** փոքրիկ կղզային պետություն են, տարաշխարհիկ զբոսաշրջության համաշխարհային ճանաչում ունեցող երկիր: